**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 14 » փետրվարի 2023թ.    № **16** - Ա

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ,ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԵՆ ԱՇԻԿԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, $48^1$-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09092022-06-0054 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Սպիտակ ք. Թորոսյան փողոց, 25 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0503-0089 կադաստրային ծածկագրով 0,0018 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Կարեն Աշիկի Յարմալոյանին տրամադրելուն:

2.Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 5620 ՀՀ դրամ:

| ԿՈՂՄ ( 12 ) | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 3 ) |
|---|---|---|
| ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | | ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ |
| ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ | | ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ |
| ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ | | |
| ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ | | |
| ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ | | |

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՋԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14
ք. Սպիտակ